Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-146-

Կանաչ թաղամաս

Ն. Ե. ԵՍԵՆԻՆԻ

ՊԵՏՀՐԱՏ ★ 1932 ★ ՅԵՐԵՎԱՆ

145

Պետքաղ № 1941 Գրաբեպ. 6989 Տիրաժ 4000
Վիճ. Պետքաղի Պատ. № 6160

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ
ՀԱՄԱՐ
11-36303գր

11 APR 2018

ՄԻԽԱՅԼՈՎ **ԹԱՐԳՄ. ԱՐԾ. ՏԵՐ ՀՈՎՆԱՆՅԱՆ**

Հին քաղաքում, հին տնակում ապրում էին Աչիկն ու Ծիտիկը: Նրանք ունեին հայրիկ, մայրիկ ու տատիկ:

Հայրիկն աշխատում եր գործարանում:

Մայրիկը Ծիտիկին եր պահում:

Տատիկը ճաշ եր յեփում:

Աչիկը դպրոց եր հաճախում:

Իսկ Ծիտիկն ամբող որը ճչում եր:

Մեկ անգամ մայրիկը, տատիկը, Աչիկն ու Ծիտիկը տանն եյին:

Տատիկը ճաշ եր յեփում ու հետն ել խոսում ինքն իրեն:

— Զանձրացրել է ինձ մեր պրիմուսը: Ծուխ է անում, փոթացնում է:

Մայրիկը Ծիտիկի շորերն է փռում սենյակում ու հետն ել դանդաուլում.

— Զանձրացրել են ինձ այս թաց շորերը: Տան ոդը խոնավանում է, ապնահոտ է ընկնում:

Իսկ Աչիկը փակել է ականջներն ու բարկությամբ բացականչում է.

— Իսկ դուք բոլորդ եյ ինձ եք ձանձրացրել: Ձեզ թողնում դասերս սովորեմ:

Հանկարծ դուռը բացվեց ու ներս մտավ հայրիկը:

— Հավաքեցեք իրերը,—ասաց հայրիկը,—տեղափոխվում ենք:

— Ո՞ր բնակարան,—հարցրեց տատիկը:

— Ո՞ր տուն,—հարցրեց մայրիկը:

— Վուշ,—ասում է հայրիկը,—նոր քաղաք:

— Թիֆլի՞զ,—հարցրեց տատիկը:

— Բաղա՞ւ,—հարցրեց մայրիկը։

— Վոչ, ասում է հայրիկը,—կանաչ քաղաք։

— Դա Աֆրիկայո՞ւմ է, թե՞ Ամերիկայում,—ձայն տվեց Աշիկը։

— Վոչ, պատասխանեց հայրիկը, մեր անտառում։ Անտառում նոր գործարան են կառուցել և նոր քաղաք են շինել բանվորների համար։

Փոխադրվեցին նոր քաղաք։

Մոտեցան նոր տանը։

Իսկ տունը տան նման չէ։

Տունը վոչ թե գետնի վրա չի շինված, այլ՝ վոտքերի վրա։

Տան տակով մարդիկ են գնում — գալիս, ավտոմոբիլներ են կանգնած։

Տան վրա գրված է «Տուն Կոմունա № 10»։

Տնից մի մարդ դուրս եկավ ու ասաց՝

— Ցես կոմունայի հերթապահն եմ, գնանք ինձ հետ։

Ու ներս տարավ նրան։

Մոտեցան յերեք դռան։

— Ահա ձեր սենյակը,—ասաց կոմունայի հերթապահը հայրիկին։

— Ահա ձերը,—ասաց նա մայրիկին։—Իսկ սա յեր՝ տատիկին։

Ներս մտան առաջին սենյակը։ Սենյակում վոչ սեղան կա, վոչ մահճակալ։

Մտան մյուսը—նույնպես դատարկ է։ Ցերրորդում էլ վոչինչ չկա։

— Վո՞ւրտեղ կախ տամ վերարկուս,—հարցրեց հայրիկը։

— Սպիտակեղենը վո՞ւրտեղ պիտի դնեմ,—ասում է մայրիկը։

—Իսկ դասերս վո՞ւրտեղ պատրաստեմ,—հարցրեց Աշիկը։

Հերթապահը մոտեցավ պատին, սեղմեց կոճակը—պատը յեռ գնաց և յերևաց պահարանը։

Մոտեցավ լուսամուտին, ձգեց բռնակը—լուսամուտի տակից դուրս սողաց սեղանի յերեսը։

Մոտեցավ մյուս պատին, քաշեց փականը—պատից դուրս յեկավ մահճակալը։

Մահճակալի վրա չոր գցեցին և Ծիտիկին պառկեցրին վրան։

— Լավ կլիներ բաղանիք գնայինք, մի լավ լողանայինք ճանապարհից հետո,—ասաց հայրիկը։

Կոմունայի հերթապահը բաց արեց մի փոքրիկ դռնակ։ Փոքրիկ սենյակ եր այնտեղ, ամբողջապես սպիտակ, առաստաղը ծակծակ, իսկ ծակոտիներից տաք անձրև եր թափվում։

Լողացան բոլորը՝ և հայրիկը, և մայրիկը, և Աշիկը, և տատիկը։ Իսկ Ծիտիկին մայրիկը լողացրեց։

— Քաղցած ենք, հարկավոր է մի բան ուտել,— ասաց տատիկը։—Այստեղ վո՞ւրտեղ են ճաշ յեփում։

— Ահա այն մեծ տանը,—ասաց կոմունայի հերթապահը։

— Այդ ինչպե՞ս,—զարմացավ տատիկը, կաթսաները ձեռքս առած պիտի փողոցով վա՞ղ տամ, ինչ է։

— Դուք էլ կաթսաները թողեք տանը,—ասաց կոմունայի հերթապահը։

Տատիկը բարկացավ։

— Վոր այդպես է, ես էլ տանը պրիմուսի վրա գեռնա-
խնձոր կխաշեմ։

— Վոչ,— ասաց կոմունայի հերթապահը,—այստեղ
պրիմուս վառել չի կարելի։ Տեսնո՞ւմ եք ինչ մաքուր է այս-
տեղ, իսկ դուք մեկ որվա մեջ ամբողջ տունը ծուխ ու
մուր կանեք։

Նստեց տատիկն աթոռին ու ասաց՝

— Ե՛ս էլ քեզ կանաչ քաղա՛ք։

Հայրիկը հագնվեց ու գնաց գործարան։

Աչիկը վազ տվեց դպրոց։

Տատիկը վերցրեց մի տոպրակ գեռնախնձոր ու գնաց
խոհանոցը վնարի։

Մայրիկն ու Ծիտիկը մնացին տանը։

Վազ է տալիս Աչիկը փողոցով։ Փողոցում վոչ մի տուն
չկա. մենակ ծառեր են։ Ֆ

Լսում է Աչիկը, վոր մեկը վերևից ձայն է տալիս.

— Տղա, տղա, վո՞ւրտեղից ես յեկել։

— Իսկ դու վո՞ւրտեղից ես ձայն տալիս,—հարցնում է
Աչիկը։

— Տանիքից։

Աչիկը վերև նայեց ու տեսավ ծառերի յետև ապակե մի
տուն։ Պատեր չկան, միայն յուսամուտներ են։ Իսկ տանիքի
վրա տղաներ կան, ձեռքերին ցնցուղներ։

— Դուք այդտեղ ի՞նչ եք անում։

— Ծաղիկներ ենք ջրում։

Նայեց Աչիկը, տեսավ տան տանիքը սեղանի պես հարթ
է, իսկ տանիքի վրա պարտեզ է բուսած։

Այդում տաղավար կա ու շատրվան է խփում։

Ցերբեք այդպիսի տանիք չեր տեսել Աչիկը։

Հանկարծ փողոցի անկյունից ահագին բազմություն
յերևաց։

Բազմությունը զարդարված եր կանաչ ճյուղերով ու
ձեռքերին թռչնակների արհեստական բներ ուներ։

Ցեվ բոլորի գլուխները նման եյին վոչ թե մարդու գլ-
խի, այլ՝ թռչունների։

— Սա ի՞նչ ժողովուրդ է,—հարցրեց Աչիկը։

Տանիքից պատասխանեցին.

— Դրանք կանաչ քաղաքի պիոներներն են։

— Հապա ինչո՞ւ կտուցներ ունեն։

— Այսոր մեզ մոտ թռչնի որ է։ Պիոներները գնում են
անտառ թռչունների համար բներ կախ տալու։

Վազ տվեց Աչիկը թռչնիկների գլուխների յետևից։ Ան-
ցան փողոցն ու դուրս յեկան դաշտ։

Դաշտում տրակտորներ են աշխատում, բայց վոչ մի տեղ
գյուղ չի յերևում։ Միայն յերեք մեծ տուն կա, քաղաքի
տների նման։

— Այս ի՞նչ տներ են,—հարցրեց Աչիկը թռչնակի
գլխին։

Թռչնակի գլուխը կտուցը դարձրեց նրա կողմն ու ասաց՝

— Կոլտնտեսության տներն են սրանք։

Դաշտը վերջացավ, սկսվեց անտառը։ Թռչնակի գլուխ-

ՊԱՏԻՐ
ՇԵՐԸ
ՊԱՏԱՆԻՐ
ԹՌՉՈՒՆ
ՎՈՐՔԱՆ ՇԱՏ
ԱՅՇՔԱՆ ՔԻՉ
ԹՌՉՈՒՆՆԵՐ
ՄՈՒՇԱՏՆԵՐ
ԹՌՉ. ՈՐ
ԹՌՉ. ՄԵՐ
ԽՆԱՄԵՑԻՐ
ԹՌՉ.
ԲԱՐԵԿԱՄ.
ՊԱՇՏ
ԹՌՉՈՒՆ.
ՄԵՐ
ԲԱՐԵԿԱՄ

ները թեքվեցին մի կածան ու ծածկվեցին ծառերի մեջ:

Վազ է տալիս Աշիկն անտառով միայնակ ու բացականչում է ինքն իրեն.

— Հե՛յ-հե՛յ.

Բայց անտառից ձայն են տալիս.

— Ե՛յ դու, կամա՛ց: Կենդանիներին մի՛ վախացրու:

Հանկարծ թփերի միջից մի նապաստակ դուրս յեկավ. նայեց Աշիկին ու նստեց գետնին:

Ա՛յ քեզ նապաստակ: Մարդուց ամենևին չի վախենում: Իսկ նապաստակն առջևի թաթերը բարձրացրել, սկանջն է քորում:

Մեկ էլ ճյուղերի ճարճատյուն լսվեց:

Այն ո՞վ է ճյուղերը չարդում:

Ցեղջերուն է անցնում անտառով:

Ցեղջերուն մոտեցավ Աշիկին, փնչացրեց ու սկսեց նրա գրպանը քրքրել դնչով:

Աշիկը վախեցավ ու ոտքի կանգնեց, իսկ ցեղջերուն—պուկ՝ փախավ:

Աշիկն ընկավ նրա յետևից:

Աշիկն է ընկել է նրա յետևից, իսկ ցեղջերուն չնչաչքուր փախչում է նրանից:

Վազեցին-վազեցին ու մի հատ դուրս յեկան մի բացատ:

Բացատում մի կլոր տուն կա: Շատ դռներ ու լուսամուտներ ունի և բոլորն էլ բաց են կրնկի վրա: Տանը յերաժշտություն է նվագում, իսկ բացատում յերեխաները շարված, մարմնամարզություն են անում—թևերը վերև, թևերը կողքի, թևերը տարածել:

— Այդ դո՞ւ եյիր աղաղակում անտառում,—հարցնում են յերեխաները:

— Յես եյի,—պատասխանում է Աշիկը:

— Մյուս անգամ չաղաղակես: Տեսնո՞ւմ ես ինչպես է վախեցել մեր ցեղջերուն:

Նայեց Աշիկն ու տեսավ, ինչպես ցեղջերուն դողահար թաղնվել է տղաների յետևը:

— Վո՞ր տեղից ձեզ այդ ցեղջերուն,—հարցրեց Աշիկը:

— Մենք շատ կենդանիներ ունենք: Այս անտառը կենդանանոց է: Այստեղ վոչ վոք կենդանիներին չի վորսում: Մենք նրանց պահում-կերակրում ենք և ուսումնասիրում ենք նրանց կյանքը:

Հիանալի՛,—ասաց Աշիկը:—Իսկ այժմ ցույց տվեք, ինչպես գտնեմ դպրոցը:

— Ահա դպրոցն,—ասացին յերեխաները, ցույց տալով կլոր տունը:

Իսկ տատիկը տոպրակը ձեռքին անցավ փողոցն ու տեսավ մի ցուցանակ, վրան գրած՝ «Գործարան-խոհանոց»:

— Հենց սա յե խոհանոցը, վոր կա,—մտածեց տատիկը:—Գնամ գետնախնձորը խաչեմ:

Ներս մտավ: Դիմացից մի սայլակ են առաջ մղում՝ գետնախնձորով լիքը:

«Սա ի՞նչ բան է,—մտածեց տատիկը,—այսքան գետնախնձոր ո՞ւր են տանում»: Ու գնաց սայլակի յետևից:

Սայլակը մոտեցրին մի մեքենայի, թեքեցին ու գետնախնձորը դատարկեցին մեքենայի մեջ, իսկ դատարկ սայլակն առաջ քշեցին: Մեքենան սկսեց չրխչրխկալ, գետնախնձոր-

ները մեջը պտույտ-պտույտ յեկան ու թռչկոտացին:

Նայում է տատիկն ու տեսնում է, ինչպես մաքրված սպիտակ գետնախնձորները մեքենայի միջից թափվում են տաքարի մեջ:

Սպասեց տատիկը մինչև մեքենան բոլորը մաքրեց, վերջացրեց ու ասաց.

— Իմ գետնախնձորն ել մաքրեցեք:

Մեքենայի մոտ աշխատող բանվորուհին ծիծաղեց:

— Դե լավ, լցրու:

Մի բոպեյում տատիկի գետնախնձորը մաքրվեց:

— Հիմի գնամ խաշեմ,—ասաց տատիկը:

Հատակին շարքով սպիտակ կաթսաներ եյին դրված, իսկ մեջ տեղ մի հսկայական ոջախ եր:

— Ոգնիր, այս կաթսան մի փոքր յետ քաշենք: Ցես մենակ չեմ կարող: Ուզում եմ գետնախնձոր խաշել:

— Սպասիր, տատիկ,— ասաց խոհարարը,— իսկույն կխաշենք:

Այդ ժամանակ ոջախին մոտեցավ մաքրած գետնախնձորի սայլակը, հետո մեկ այլ սայլակ՝ գդգարաով լիքը, ապա յերրորդը՝ միսը վրան:

Բոլորը դատարկեցին կաթսաների մեջ:

Թշչացին կաթսաները, տաք գոլորշի կանգնեց ոջախի վրա:

— Պատրաստ է տատիկ,— ասաց խոհարարը,—գնա սեղանատուն՝ ճաշելու:

Մայրիկն ու Ծիտիկը [illegible] գնացած, լուսամուտից նայում եյին դուրս: Լուսամուտի յետև այգի յե, այգու մեջ յճակ, իսկ յճակում նավակներով մարդիկ են զբոսնում:

Մայրիկը ծիտիկին նստեցրեց աթոռին, ինքը դուրս գնաց միջանցք: Մինչև վերադարձավ, տեսավ Ծիտիկն ընկել է աթոռի տակ ու լաց է լինում:

— Մի բոպե մոտիցդ հեռանալ չի լինում, իսկույն գլորվում ես ցած,—բարկացավ մայրիկը:

Գրկեց Ծիտիկին ու սկսեց որորել:

Դուռը ծեծեցին:

— Ո՞վ է:

— Կոմունայի հերթապահը:

Կոմունայի հերթապահը նայեց լացող Ծիտիկին ու ասաց.

— Յերեխային տարեք մսուր: Մեր կանաչ քաղաքում բոլոր փոքրիկ յերեխաները գտնվում են մսուրում: Իսկ ձեզ համար ել գործարանում աշխատանք կլինի:

— Ծիտիկն առանց ինձ կտխրի,— ասաց մայրիկը:

— Վոչ,—ասաց կոմունայի հերթապահը: —Այնտեղ նրա համար ուրախ կլինի, քան ձեզ մոտ:

Մայրիկը Ծիտիկին տարավ մսուր:

Մսուրում չորս սենյակ կար: Սենյակներից մեկում յերեխաները խաղ եյին անում, մյուսում աշխատում եյին, յերրորդում ուտում-խմում եյին, իսկ չորրորդում քնում եյին: Շատ մահճակալներ կան այնտեղ և բոլոր մահճակալներում յերեխաները են քնած: Միայն մեկ մահճակալն է դատարկ:

— Սա ձեր Ծիտիկի մահճակալն է,—ասաց մայրիկին մսուրի հերթապահուհին:

ԱՐԽԻՎ
ԳՐԱԳԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆ

Տատիկը ճաչեց ու սեղանատնից տուն վերադարձավ:

Տեսնում է տանը վոչ վոք չկա:

Սպասեց մեկ ժամ, սպասեց յերկու ժամ՝ վոչ վոք չի գալիս:

«Այս ո՞ւր են գնացել,—մտածեց տատիկը,—յերևի մոլորվել են»:

Հանկարծ դուռը ծեծեցին: Յեկավ հայրիկը:

— Մերոնք կանաչ քաղաքում մոլորվել են,—ասում է տատիկը:

— Վոչինչ,—ասում է հայրիկը,—կգտնվեն:

— Ոխ,—ասում է տատիկը,—սոված են հիմի, ճաչ էլ չկա:

Դուռը բացվեց ու ներս վազեց Աչիկը:

— Ճաչ չկա քեզ համար,—ասում է նրան տատիկը.

— Հարկավոր էլ չե,—բացականչեց Աչիկը:—Յես դըպրոցում արդեն յերկու անգամ ճաչել եմ: Մեկ անգամ առավոտյան, առանց արգանակի, մեկ անգամ էլ հիմի, արգանակով ու քաղցրեղենով:

— Վոր այդպես է, լավ է,—ասաց տատիկը:

Այդ ժամանակ վերադարձավ մայրիկը:

— Վորտե՞ղ էյիր,—հարցնում է տատիկը:

— Գործարանում աշխատում էյի,—ասաց մայրիկը:

— Հապա Ծիտիկն ո՞ւր է:

— Ծիտիկն էլ աշխատանքի յե:

— Այդ ի՞նչ աշխատանք է:

— Մասուրում: Նա այնտեղ կոթ է խմում, չաքարահաց է կրծում, քնում է մահճակալում ու սալյակով զբոսնում է:

Յերեխանե՛ր,

Այն, ինչ յես պատմեցի կանաչ քաղաքի մասին, հեքիաթ չե: Խորհրդային ամրողջ յերկրում արդեն այդպիսի քաղաքներ են կառուցվում բանվորների համար: Նոր, կանաչ քաղաք-այգիներ: Այդ քաղաքներում լինելու յեն կոմունաներ, գործարաններ, խոհանոցներ, մասուրներ ու դըպրոցներ՝ այգիների մեջ:

Յելեկտրական գնացքը մեզ արագ կսլացնի կանաչ քաղաք: Ավտոմոբիլը պատույտ կտա մեզ կանաչ քաղաքում, կտանի դպրոց, խոհանոց, գործարան. Խոհանոց-գործարանը մեզ համար ճաչ կեփի: Լվացարան-գործարանը մեր սպիտակեղենները կլվանա:

Հին քաղաքը, հին կեղտոտ գյուղն այլևս գոյություն չի ունենա և բոլորը կապրեն կանաչ քաղաքներում:

ԱՐԽԻՎ
ԳՐԱԳԱՆԱՏՈՒՆ
ՀՅՈՒՍԻՍԻ ՄԱՍՆԱՅԻՆ ՄԱՍ

ՀՀ Ազգային գրադարան
NL1051308

գին՝ 1ռ20կ

—30—

II
36303

Д. МИХАЙЛОВ

ЗЕЛЕННЫЙ ГОРОД

ГИЗ С.С.Р. АРМЕНИИ
ЭРИВАНЬ